

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առուօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասցրէք ձեր ձայնը. — ԵՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Կերթիւնի արտասահմանեան առեւ-
տուրը. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Աս-
խաբադից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
լուրեր. — ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բարեկոյն եւ Աս-
տուածաշունչ. Մարդկային կեանքի պահպա-
նութեան դաշնակցութիւնը.

ՀԱՅՏՐԷՔ ԶԵՐ ԶԱՅՆԸ

Մենք յայտնեցինք, որ Բարձրագոյն հրա-
մանով հաստատված է մի պաշտօնական
խորհրդակցութիւն ընկերութեան գիւղա-
տնտեսական արդիւնաբերութեան գրու-
թիւնը Ռուսաստանում եւ մշակելու մի-
ջոցներ այդ գրութիւնը բարելաւելու հա-
մար: Մայրաքաղաքի լրագիրները հաղոր-
դում են այն անձանց ցուցակը, որոնք
խառնուր կայսրի բարեհաճութեամբ նշա-
նակված են այդ խորհրդակցութեան ան-
դամներ: Այդ ցուցակում մենք տեսնում
ենք պետական խորհրդի, միջխտարների օգ-
նականների եւ մի քանի գեպարտամենտե-
րի պետների անուններ, որոնց մէջ
այդք են ընկնում Պոլոզեցեկ, Սարուբով,
Կալաշով, Կոզովցեկ, Կոպալեւսկի, Սարկիս
եւ ուրիշներ:

Այդ ցուցակի մէջ է եւ Մոսկովայի գիւ-
ղատնտեսական ընկերութեան նախագահ
Իլյան Եւսեբիեւի, որը յայտնի է իբրեւ
նախաձեռնութեան ընդունակ մի անձնա-
ւորութիւն եւ եւսեբիեւի գործող: Եւսե-
բիեւի նշանակվելը ապացոյց է այն բա-
նի, որ եթէ մեր գիւղատնտեսական ըն-
կերութիւնները լուրջ եւ սխառնական
գործունէութիւն ցոյց տային, նրանց ձայ-
նը կը ստանար նշանակութիւն եւ, դառ-
նալով հեղինակաւոր, լսելի կը լինէր այն
չրճաններում, որոնք կարող են իրանց ա-

ջակցութեամբ օգնել այդ ընկերութիւն-
ների գործողներին հասնելու իրանց ծրա-
գրած նպատակներին:

Մեր երկրում եւս գոյութիւն ունի գիւ-
ղատնտեսական մի ընկերութիւն, որ նո-
րերս անցեց իր յիսնամեայ յօրեւանը: Ըն-
կերութիւնը իր յիսնամեայ գոյութեան
ընթացքում կատարել է մի քանի էական
եւ խոշոր գործեր, բայց վերջին հինգ-վեց
տարիները գործում է դանդաղ եւ թոյլ
կերպով, առանց որոշ եւ հաստատ ծրագ-
րի, առանց ներգործական վերաբերմունքի
գէպի երկրի շահերի պաշտպանութիւնը:
Իսկ գործելու ապարդիւր այժմ, համե-
մատած անցեալի հետ, շատ ընդարձակվել
է, երեւան են եկել բազմաթիւ կարեւոր
հարցեր, որոնք սպասում են իրանց լուծ-
ման:

Ընկերութեան խորհրդի անդամների
պաշտօնավարութեան ժամանակը վերջացել
է եւ պէտք է ընտրվեն նոր պաշտօնականներ:
Այժմ ընկերութեան անդամների համար
ներկայանում է մի բարեպատեհ առիթ
վերաբերմունքի իր գործող մարմինները եւ
ընկերութեան գործերի վարչներ գիւղա-
տնտեսական անձնավարութիւններին, որոնք նոր
կեանք ներշնչելին այդ ընկերութեանը,
առաջ մղելին երկրի արդիւնաբերութեան
վերաբերեալ խնդիրները եւ կարողանային
իրանց ձայնը հասցնել այն շրջաններին,
որոնք այժմ դառնում են գիւղատնտեսա-
կան կարիքների ընկերութեան եւ դարման
են որոնում այդ կարիքների համար:

Թող Մոսկովայի Գիւղատնտեսական Ըն-
կերութեան օրինակը խթան լինի եւ մեր
ընկերութեան համար լուրջ գործելու եւ
հեղինակաւոր անուն ձեռք բերելու, որ-
պէս զի մեր երկրի կարողանալ վերջա-
պէս հանդէս բերել իր արդիւնաբերական
ոյժերը եւ հարստացնել իր ժողովուրդը,
որ ներկայումս կարօտութեան մէջ է:

մեզ են հասել եւ հնազանդութեան սեփական-
աւորութիւնն են դարձել եւ ցոյց են տալիս, թէ
Բարեկամներն այն ժամանակ մի շատ բարձր
կուլտուրայի տէր երկիր է եղել: Վերոյիշեալ
օրհնագրութեան մէջ պարզապէս որոշված են
տէրերի, ստրուկների, վարձկան բանտերների,
կալուածատէրերի, կապալառուների, վաճառա-
կանների եւ գործակառարների յարաբերու-
թիւնն ու պարտականութիւնները միմեանց
վերաբերմամբ, բացորոշ կերպով սահմանված է
ձկնորսութեան իրաւունքը մի եւ նոյն ջրանց-
քում տէրութեան պանազան մասերի բնակիչ-
ների համար եւ այլն:

Տէրութեան ամէն մի պիտանի հպտակի
համար պարտադիր էր զինուորական ծառա-
յութիւնը, բացառութիւն էին կազմում միայն
այն մարդիկ, որոնք հին հոգեւորականի ցեղից
էին ծագում կամ թէ չէ տէրութեան համար
ուրիշ ասպարէզում կարեւոր ծառայութիւն
էին մատուցանում: Երկրի մայրաքաղաք Բա-
բելոնում էին գտնվում գլխաւոր եւ բարձ-
րագոյն զատարանը, դրամահատութեան հիմ-
նարկութիւնը եւ այլն: Գեղեցիկ գրեւոր ա-
րուեստը ամենուրեք տարածված էր, ինչպէս
որ այդ երեւում է մեզ հասած այն բազմա-
թիւ եւ բազմաբովանդակ նամակներից, որոնք
այն ժամանակվայ առեւտրական եւ ընտանեկան
կեանքի հանգամանքների մասին մեզ բաւական
պարզ եւ որոշ տեղեկութիւններ են տալիս:
Զարմանալի չէ ուրեմն, որ մի այդպիսի լաւ
կազմակերպութիւն ունեցող եւ քաղաքակրթ-
յան տէրութեան մէջ ոչ միայն պատասխան հա-
ղորդակցութիւնը, առեւտուրը, արդիւնաբերու-
թիւնը, հողագործութիւնը եւ անասնապահու-
թիւնը, այլ եւ գիտութիւնները, օրինակ, երկ-
րագիտութիւնը, մաթեմատիկան եւ մասնաւոր
աստղաբանութիւնը հիացման արժանի դար-
բացման բարձրութեան էին հասել: Միայն
Հռոմը կարող է մրցել այն քաղաքակրթական

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ինչպէս է հրաշք կատարվում — Երբեմն շատ
հեշտ կերպով կրնում են եւ էականագին հրաշք-
ներ: Մարդը ուզեց հրաշքորով լինել եւ ահա
արաւ մի րան. թող զարմանայ ով ուզում է,
թող հաւատայ ով կարող է, էականագին հրաշք-
ներ ցոյց տուողը դրա մասին չէ եւ մոռնում:
միայն թէ նրա գործած հրաշքը քիչ մօղային
լինի, քիչ նորութիւն ունենայ, քիչ խօսել տալ:
Այսպիսի էականագին հրաշքներ ցոյց տուողնե-
րից մէկը, եթէ ոչ միայն, Սուլթանի «Новое
Время» լրագիրն է: Յանկարծ, անսպասելի
կերպով, այդ գրական բարձրաստի, ուր վեր-
ջերումս ընկալութիւն հաստատողներից մէկն
է Վասիլի Վելիչկին, սկսեց կովկասեան ազ-
գերի բարեկամ եւ բարերար ցոյց տալ իրան:
Ինչ էր պատահել: Թիֆլիսի ազնուականութեան
կողմից պատգամաւորութիւն է գնում Պետեր-
բուրգ, ինչպէս հաղորդել էինք եւ մենք: Այդ
առիթով Սուլթանի օրգանը պարտք համարեց
անպատճառ իր խօսքն էլ ասել: Եւ ահա ինչ է
ասում.

Ձէ կարելի ձեռք տալ մայրենի լեզուներին:
Նրանք Անդրկովկասում օգտվում էլ են ա-
զատութեամբ, լավում են ամէն տեղ — թէ
անհրաժեշտ, թէ հրապարակներում, հասարա-
կական ժողովներում, թատրոններում, եկե-
ղեցիներում եւ մզկիթներում: Այդ լեզուներ-
ով լրագիրներ եւ գրքեր են հրատարակ-
վում: Իսկ ինչ վերաբերում է դատարանին,
վարչութեան, զորքին եւ պետական դպրո-
ցին, այստեղ տառամոլներ լինել չեն կա-
րող: Ռուսաց լեզուն պաշտօնական յարաբե-
րութիւնների մէջ եւս պարտաւոր պէտք է լինի
այն բնական մածուցիկ նիւթը, որ միաց-
նում է պետութեան զանազան ազգութիւն-
ները եւ հեշտացնում է փոխադարձ յարաբե-
րութիւնները: Ռուսաց լեզուն պաշտօնա-
կան դիրք տալը բոլորովին չէ նշանակում,
թէ տեղական լեզուները դատարարութեան
կորստի: Թէ ստորին եւ թէ միջնակարգ
դպրոցներում, յարմարվելով այն տեղե-

ազդեցութեան հետ, որ Բաբելոնը մօտ 2000
տարի իր ժամանակակից ազգերի եւ տէրու-
թիւնների վրա է տարածել:

Եթէ մէկը այդ փաստի վրա կասկածում է,
նրա կասկածը կարող են փարատել Եգիպտոսի
էլ-Մամարն (Թեբէ եւ Մեմփիս քաղաքների
մէջ) քաղաքում գտնված եւ թուով մօտ 300
կաւէ տախտակների, որոնք գլխաւորապէս
Բաբելոնեան, Ասորեստանի եւ Միջագետքի
թագաւորների Եգիպտոսի Ամենօֆի Գ. եւ Դ.
փարաւոններին գրած նամակներն են: Դրանց
մի մասը պատկանում է Քանանացոյ աշխարհի
մեծ քաղաքների, օրինակ Տիւրոսի, Սիդոնի, Աս-
կալոնի եւ Երուսաղէմի եգիպտական փոխա-
քաներին: Ուրեմն հէնց միայն այն փաստը, որ
վերոյիշեալ մեծ մարդիկ բաբելոնական լեզուն
իրեն պաշտօնական յարաբերութեան համար
միջոց են գործածում, պարզ ցոյց է տալիս,
թէ Բաբելոնեանի կուլտուրայի ազդեցութիւնը
որքան տիրապետող էր Եգիպտոսի մինչեւ Նե-
ղոս գտնվող երկրների վրա 2300—1400 Ք. ճ. ա.

Շատ ընդունի է եւ այն լոյսը, որ արանով
ընկնում է Պալէստինի ամենահնազանգի պատ-
մութեան վրա: Իսրայելի 12 ցեղերը այն ժա-
մանակ մտան Պալէստին, երբ վերջինս արդէն
Բաբելոնեանի կուլտուրայի կատարեալ սեփա-
կանութիւնն էր դարձել: Պալէստինում այն
ժամանակ տիրապետում էին Բաբելոնեանի
արդիւնաբերութիւնը, օրհնագրութիւնը, սովո-
րութիւնները, գիտութիւնները եւ այլն: Այժմ
հասկանալի է դառնում, թէ ինչպէս Հին Կտա-
կարանում պատմված զոհաբերութեան ձեւը
եւ հոգեւորականութիւնը Բաբելոնեանի հա-
մանման երեւոյթներից պէտք է ազդված լինեն:
Աստուածաշնչի մի շարք պատմութիւնները
գտնվում են Բաբելոնեանի կուլտուրայի ազդե-
ցութեան տակ: Բաբելոնեան ջրհեղեղի պատ-
մութիւնը 2000 տարի Ք. ճ. ա. արդէն գրված
էր մի կաւեայ տախտակի վրա, որ գտնվում

լին, ուր նրանք գոյութիւն ունեն, տե-
ղական լեզուների ուսուցման պէտք է
ժամանակ արվի եւ դրա համար միջոցներ
պէտք է նշանակվեն: Ցանկալի է նոյնպէս,
որ Անդրկովկասում հիմնվի արեւելեան լեզու-
ների ինստիտուտ: Ինչ վերաբերում է տե-
ղական լեզուներին, անկասկած է, որ
այն ամեն, ինչ վաղուց նպատակաւորաւ
է համարված ներքին Ռուսաստանի համար —
թէ քաղաքային եւ թէ գեղատեղի ինքնավա-
րութիւնները — ցանկալի է տարածել եւ կով-
կասում: Տնտեսական, գուշտ անային գործե-
րում էլ ով է աւելի լաւ գտնաւորը, քան
իրանը, տեղացի ընակիցները: Կովկասեան
ազգայնութեան հողի վրա ծագող հարցերը
բացատրելու համար, բաւական է, որ ու-
սը իւրաքանչիւր վիճելի դէպքում համար-
ձակ կերպով ձեռք մեկնէ տեղացուն եւ նը-
րանք բաց կերպով միմեանց աչքերին նայեն:
Թիւրքացութիւնը այդ ժամանակ կը պարզ-
վի արագ կերպով: Վաս է այն, որ մարդիկ,
հոգեցողի միմեանց բացատրութիւնն չը տա-
լով, միմեանք են իրանց հոգու խորքում
թշնամութիւն... Դա լաւ չէ եւ չը պիտի
լինի:

Այս է հրաշքը: Մի հրաշք, որ ամենից
շատ, անողորմ կերպով ծեծում է հէնց նոյն
այդ Սուլթանի օրգանը, փոխադարձ ատելու-
թիւնների, մարդակերութեան այդ վատանու
օրգանը: Բայց ինչ է սա նշանակում: Ապաշ-
խարանը, մեղացի նշանակում է սա թէ վա-
ղուց հողմացոյցի անուն վատաւան լրագիրը
այստեւտեւ այդպէս պիտի լինի: Միմիտ
պէտք է լինել այդպէս կարծելու համար: Էժա-
նագին հրաշքործութիւն... Վաղը նոյն այդ
հրաշքործութիւնը ուրիշ երեք կը բերէ մեզ...

ԿԵՐԾՈՒՆ ԱՐՏԱՔԱՆԻՆ ԱՌԵՒՈՒՆԸ

Մեր անցեալ յօդուածներից ընթերցողն ար-
դէն գիտէ, որ նախադրեալները XVI
համաժողովի նիստերից մէկում ընտրվեց մի
մասնաժողով, 16 ֆիրմաներից բաղկացած, որը
պէտք է զբաղվեր կէրօսի արտադրման
առեւտուրի կազմակերպութեան խնդրի ու-
սումնասիրութեամբ եւ կազմէր ապագայ դաշ-

էր նիւնէում եւ Սարգիսապալի գրադարանին
էր պատկանում: Բաբելոնեան Նոյն՝ Քրիզոս-
թոսը աստուածային մի եւ նոյն պատուէր-
ներն է ստանում: Նրա նաւն է Հայաստանի
սարերից մէկի վրա է ապաստանում, առաջուց
արդէն մի ծիծառ, յետոյ մի աղաւ: Եւ վերջա-
պէս մի աղաւ: Բայց թողնելուց յետոյ: Պարզ
է ուրեմն, որ Բաբելոնեան ջրհեղեղի պատմու-
թիւնը մտել է Քանանացոյ աշխարհը, բայց
վերջինիս աշխարհագրական տարրեր պայման-
ները մոռացութեան են տուել այն հանգա-
մանը, որ ծովն է եղել ջրհեղեղի գլխաւոր
ֆակտորը: Բացի դրանից Բաբելոնեան կաւէ
տախտակների վրա գտնվել է աշխարհիս ստեղ-
ծագործութեան մասին մի էպոս, որ ինչեցեւում
է Մովսիսական ստեղծագործութեան պատմու-
թիւնը, բայց չը պէտք է մոռնալ եւ այն հան-
գամանքը, որ Մենդոզ գրքի առաջին գլխի հե-
ղինակ հոգեւորական գիտնականը աշխատել է
բոլոր դիւցաբանական գծերը իր «Աշխարհի
ստեղծագործութեան պատմութիւնից» հետա-
նել: Խաւար ջրային քաղաք նա մի եւ նոյն ա-
նունով է կոչում, ինչ որ նրան տալիս է Բա-
բելոնեան բանաստեղծը, այն է Տեհիւ, համա-
ձայն Տիւրոսի հետ: Հետաքրքիր է եւ այն
փաստը, որ Բաբելոնեան էպոսում եւ ոչ թէ
Աստուածաշնչի պատմութեան մէջ դեր խաղացող
բարութեան սկզբունքի կոլուր չարութեան
սկզբունքի դէմ (Մարդու Աստուծու կոլուր
Տիւրոսի դէմ) ինչեցեւում է Ս. Յովնանէսի
յայտնութեան մէջ Միքայէլ Հրեշտակապետի
կոլուր անդունդի կենդանու, այսինքն պատու
օձի հետ, որ այնտեղ սատանայ է կոչվում:
Այս ամբողջ պատկերացումը բաբելոնական ազ-
գեցութիւնն է կրում:

Ինչպէս երեւում է, Արամի մեղադրութու-
թեան եւ անկան խորհմասն պատմութիւնն
էլ բաբելոնական ծագում ունի, որովհետեւ
Բաբելոնեանում կատարված հնագիտական պե-

ԲԱՅԵԼՈՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ

(Նամակ Գերմանիայից)

Մի քանի օր արանից առաջ Բերլինի համալ-
արանի պրոֆեսոր եւ յայտնի արեւելագետ
Դոկտոր Դեյլի «Գերմանական արեւելագիտա-
կան ընկերութեան» նիստերից մէկում կարգա-
կան ընկերութեան մէջ պարզապէս որոշված են
տէրերի, ստրուկների, վարձկան բանտերների,
կալուածատէրերի, կապալառուների, վաճառա-
կանների եւ գործակառարների յարաբերու-
թիւնն ու պարտականութիւնները միմեանց
վերաբերմամբ, բացորոշ կերպով սահմանված է
ձկնորսութեան իրաւունքը մի եւ նոյն ջրանց-
քում տէրութեան պանազան մասերի բնակիչ-
ների համար եւ այլն:

Տէրութեան ամէն մի պիտանի հպտակի
համար պարտադիր էր զինուորական ծառա-
յութիւնը, բացառութիւն էին կազմում միայն
այն մարդիկ, որոնք հին հոգեւորականի ցեղից
էին ծագում կամ թէ չէ տէրութեան համար
ուրիշ ասպարէզում կարեւոր ծառայութիւն
էին մատուցանում: Երկրի մայրաքաղաք Բա-
բելոնում էին գտնվում գլխաւոր եւ բարձ-
րագոյն զատարանը, դրամահատութեան հիմ-
նարկութիւնը եւ այլն: Գեղեցիկ գրեւոր ա-
րուեստը ամենուրեք տարածված էր, ինչպէս
որ այդ երեւում է մեզ հասած այն բազմա-
թիւ եւ բազմաբովանդակ նամակներից, որոնք
այն ժամանակվայ առեւտրական եւ ընտանեկան
կեանքի հանգամանքների մասին մեզ բաւական
պարզ եւ որոշ տեղեկութիւններ են տալիս:
Զարմանալի չէ ուրեմն, որ մի այդպիսի լաւ
կազմակերպութիւն ունեցող եւ քաղաքակրթ-
յան տէրութեան մէջ ոչ միայն պատասխան հա-
ղորդակցութիւնը, առեւտուրը, արդիւնաբերու-
թիւնը, հողագործութիւնը եւ անասնապահու-
թիւնը, այլ եւ գիտութիւնները, օրինակ, երկ-
րագիտութիւնը, մաթեմատիկան եւ մասնաւոր
աստղաբանութիւնը հիացման արժանի դար-
բացման բարձրութեան էին հասել: Միայն
Հռոմը կարող է մրցել այն քաղաքակրթական

նակցութեան ծրագրերը, ապա ստանալով կէրօ-
սինագործների մեծամասնութեան համաձայն-
ութեամբ, ներկայացնէր միջնորդութեան, որ ըն-
դունելով իր հովանաւորութեան տակ այդ
գաղափարները, վերջնականապէս ձեւակեր-
պէր եւ թոյլատրէր նրա գործունէութիւնը:

Պէտք է խոստովանել, որ այդ խնդիրը մեր
նաւթային արդիւնաբերութեան ամենահիմնա-
դրոտ կողմերից մէկն է, եւ նրան կանոնաւոր
ընթացք տալուց եւ խելացի ու օրինաւոր հի-
մունքների վրա դնելուց է համարեա կախված
մեր փոքր եւ միջակ կերտարագործների վի-
ճակը:

Ներկայ ճգնաժամը մի այնպիսի ծանր վիճա-
կի մէջ է դրել այդ խնդիրներ, որի նմանը դեռ
չէ եղած եւ դժուար է նոյն իսկ երեւակայել
Նախ եւ առաջ նրանք կանխիկ փող չունեն,
եղածը գործի մէջ է մտցրած, շատերն էլ ունե-
ցածից երկու անգամ աւելի պարտքի տակ են
ընկած, իսկ պատրաստած ապրանքը առնող չը
կայ. եթէ առնում են, այն էլ համարեա կէս
գնով: Ստացած փողով ընթացիկ ծախսերը չեն
կարողանում ծածկել, արտադրանքը միջոց չու-
նեն, որպէս զի անմիջապէս գործ կարողանան
ունենալ սպառողի հետ, ապրանքը գլխինքին է
մնացել, պարտքը պարտքի վրա է ծանրաբեռն-
վում, տոկոսը տոկոսի վրա, բանկերն էլ այդ-
պիսիների առաջ փակել են իրանց դռները: Ինչ
անեն, ուր դնեն եւ ում դիմեն: Կանոնաւոր
մտածողութեան թիւն անգամ կորցրել են: Այդ
դրութիւնը աւելի ծանր եւ զգալի է դառնում, երբ
նրանք տեսնում են, որ խոշոր կերտարագործ-
ները, որոնք ունեն կազմակերպված առեւտուր
արտասահմանեան շուկաներում, վաճառում են
այն տեղերում ծախված կերտարագործները, իւրաքանչիւր
պտուղից միջին թիւով 40—50 կոպէկ:

Խոստովանում ենք, մենք մեծ յոյս ունէինք,
որ մասնաժողովը մի գրական միջոց կը գտնէ,
որովհետեւ մի այնպիսի ուրախութեամբ ըն-
դունվեց միութեան հարցը, որ չէր կարելի ա-
նել, թէ այստեղ կարող է տեղի ունենալ հին
եղբայր: Այդ մասնաժողովը արդէն իր զբաղ-
մունքները վերջացրել է եւ ստանալով մեծա-
մասնութեան համաձայնութիւնը, արդէն ճանա-
պարհվել է Պետերբուրգ՝ վերջնական լուծում
տալու նպատակով:

Արդեօք ինչպէս է վերջացրել մասնաժողովը
իր զբաղմունքները: Ի՞նչ է արել նա եւ որոնք
են նրա նշանակած գլխաւոր կարեւոր:

Մինչեւ այժմ, ինչպէս շատ անգամ մենք
գրել ենք, մեր կերտարագործները արտահանութիւնը
գլխաւորապէս կենտրոնացած էր Նորեյի, Բոս-
նիայի եւ Մանթաշեանի ձեռքին: Այժմ արանց
հետ միացել են նաեւ «Կասպեան» եւ «Լ—ՅՈ
керосино-масляного производства» ընկերու-

ղումների ժամանակ մի շատ հին կերպով գլան
(Siegeleylinder) է գտնվել, որ հետեւեալ պատ-
կերն է ներկայացնում: Գլանի մէջտեղում, պը-
տուղներով ծանրաբեռնված ծառի աջ կողմում,
կանգնած է մի մարդ, իսկ ձախ կողմում—մի կին,
որոնք երկուսն էլ իրանց ձեռքերը տարածել
են դէպի ծառի պտուղները: Կնոջ ետեւում մի
օձ է գտնվում:

Թէ բարեկամները եւ թէ իւրաքանչիւրները
կարծում էին, որ մարդը մեռնելուց յետոյ միւս
աշխարհում ուրախ կենալը չէ վարում, դրա
համար էլ այս աշխարհի երկար կենալը նրանց
համար ամենացանկալի եւ սիրելի բանն էր:
Բայց հարկաւոր է մի եւ նոյն ժամանակ նկա-
տել, որ բարեկամները իրանց ապագայ
կենալը աւելի պարզ եւ որոշ էին պատկերաց-
նում, քան թէ իւրաքանչիւրները: Բարեկամ-
ները հաւատում էին Շիոյ կողմած տարածու-
թեան, որտեղ միայն բարեպաշտ մարդիկն էին
հանգստանում եւ պարզ ու մաքուր ջուր խը-
մում: Նրանց այդ կրօնական հաւատը, ինչպէս
երեւում է, յետոյ մտել է եւ իսլամի վարդա-
պետութեան մէջ:

Գիտնական Իելիշի կարծիքով միաստուածու-
թեան գաղափարը առաջին անգամ ընդունել են
սեմիտները, որովհետեւ բարեկամներն էլ
«Աստուած» խօսքը շատ բարձր եւ խոր մտքով
էին բմբռնում եւ իրանց պատկերացումում Բա-
բել խօսքը բարկացած է երկու խօսքից, բար
եւ էլ «էր» բառի ամենամիջոց թարգմանու-
թիւնը նշանակում է «նպատակ», այսինքն այն
նպատակը, դէպի որը ուղղված են երկրքին
նայող մարդկանց աչքերը:

Լ. Բաբայեան

Լազարի, փետրվարի 1-ին

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՇ-
ՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Թէ ինչ մեծ եւ անագին գործ կարող են կա-

թիւնները Այդ վերջիններն էլ մեծ դրամագլխի
տէր ֆիրմաներ են:

Սկզբում մասնաժողովի նիստերում մեծ
ֆիրմաների ներկայացուցիչները ձեռնպահ էին
մնում կարծիքներ յայտնելուց՝ կամենալով լսել
փոքր եւ միջակ կերտարագործների ներկայա-
ցուցիչներին: Իսկ արանք մեծամասն յայտնում
էին, թէ ցանկալի է միմեայ եւ մի գնով ծա-
խել ընդհանուրին պատկանած կերտարագործ
Այդ ցանկութեան իրագործումը մեծ ֆիրմաները
ներկայ պայմաններում գտնելով դժուար եւ
վերին աստիճանի բարդ, առաջարկում են
փոքրերին հետեւեալը:

1) Միջակ եւ փոքր կերտարագործները կա-
րող են ստանալ այդ յիշեալ հինգ ֆիրմաներից
նաւթ եւ իրանց գործարաններում գտնույթ
պարտաւոր են վերագործնել մեծ ֆիրմաներին
իւրաքանչիւր 3 պտուղ 10 ֆունտ նաւթի փո-
խարէն 1 պտուղ կերտարագործ եւ երկու պտուղ նաւթ
թափանցորդ (մաքուր): Իւրաքանչիւր պտուղ կէ-
րտարագործ համար նրանք, փոքրերը, ստանում են
6 կոպ., առանց մասնակցելու այդ քանակու-
թեան կերտարագործի ստացված օգուտին:

2) Նոյն պայմաններով, եթէ փոքրերից մէկը
ցանկանում է մասնակցել վաճառուից ստաց-
ված օգուտին, նա կը ստանայ միմեայ 5 կոպէկ
իւրաքանչիւր պտուղ պատրաստած կերտարագործի հա-
մար:

3) Նոյն պայմաններով, փոքրը կարող է ա-
ռանց վարձ ստանալու, յանձնել մեծ կերտարա-
գործներին իր պատրաստած կերտարագործ
խել կամիսկայով:

Եւ այդ երեք կէտը հաւանել են մեր կերտարա-
գործները: Ով որ պայմանով կամենում է, կարող
է գործել իր ընտրութեամբ, հինգ տարի
ժամանակով:

Եթէ իրօք այդ է ընտրված մասնաժողովի ա-
րածը, մենք թել կը տանք մեզ ասելու, թէ նա
ոչինչ չէ արել: Այո, նա ոչինչ չէ արել այդ
խնդրի վերաբեր ընտրութեամբ համար: Այդ ա-
ռաջարկութիւնները նոր չեն, շատ հին են: Ծառ-
նակ տարի առաջ Նորեյի եւ Բոսնիայի կողմից
եղել են նոյն այդ առաջարկութիւնները: Մեր
փոքր եւ միջակ կերտարագործներին, սակայն
արանք չեն համաձայնվել: Իսկ այսօր համա-
ձայնութիւն են տալիս, հաւատացած ենք, հա-
կառակ իրանց համագործակցի: Եւ միթէ արժէ
մի այդպիսի համաձայնութեան համար ան-
հանգիստ անել միջնորդութիւնը, չէ որ սա մի
հասարակ պայմանագիր է մեծ եւ փոքր կերտարա-
գործների մէջ, որի հիման վրա մեծ ֆիր-
մաները կապալով են վերցնում փոքրերի գոր-
ծարանները եւ այդպիսով ընդ միշտ գրկում
նրանց ինքնուրոյն գործելու իրաւունքից:

Արդեօք Նորեյ եւ Բոսնիայ տասնեակ

տարեկ եռանգը եւ հասարակական շահերի բա-
րեկիտը պաշտպանութիւնը, դրա փայլուն ա-
պացոյցը տուեց նորերս Պարիզի «Matin» լրա-
գիրը: Ճիշտագիտեան մասում իր այդ նշանաւոր
օրագրեր, դեռ երկու տարի առաջ, հրաւեր կար-
գաց հիմնել ժողովրդական թատրոն
ժողովրդի, ամբողջի նուէրներով, եւ մի շարքի-
վայ մէջ նա ժողովրդեաց հասարակական հանգա-
նակութեամբ մտա մի միջոց ֆրանկ փող: Մի
շարքիվայ մէջ նա կարողացաւ իրագործել ժո-
ղովրդական թատրոնի գաղափարը: Այժմ նա
գլուխ է կանգնել մի վերին աստիճանի համա-
կրելի ձեռնարկութեան, որը նա իրագործեց
նոյնպէս երեք-չորս օրվայ ընթացքում, ստա-
նալով ֆրանսիական հասարակութեան եռան-
դուն աջակցութիւնը:

Յունիստի սկիզբներին «Matin» լրագիրը մի
կատաղի արշաւանք սկսեց կաթի եւ կաթնալոյս
արդիւնների կեղծիքի դէմ: Բացատրելով հա-
սարակութեան թեթեւ եւ դիւրբարձեղի ընդոյթ
գրված յօդուածներով, թէ ինչ անագին նշանա-
կութիւն ունի կաթի ժողովրդի մոտեցի եւ
մանաւանդ մանկական սնունդի գործում, նա
անհերքելի փաստերով երեւան հանեց կաթնա-
վաճառների գործած սարսափելի զեղծումները,
մերկայցրեց այն կեղծիքը (falsification), որին
ենթարկում են կաթնավաճառները կաթի եւ
կաթնալոյս արդիւններին: Եւ զրանով իւրաքանչի-
ւորում են ժողովրդական կենսութիւնը իւրաքանչի-
ւոր տարի տասնեակ հազարաւոր երեխաներ
գերեզման են ուղարկում: Բանից դուրս է գա-
լիս, որ Պարիզի պէս մայրաքաղաքում կաթնա-
վաճառները մի ամբողջ սինդիկատ են կազմել,
որ գործում է քան տարուր ի վեր իրբու-
մասնաւորապէս կազմակերպված մի ընկերու-
թիւն, եւ ամբողջ քան տարի թունաւորում է
մայրաքաղաքի բնակիչներին: Կեղծելով կաթի եւ
կաթնալոյս արդիւնները ու դրանով անագին
հարստութիւն զգեցելով: Սինդիկատը այնպէս

տարիների ընթացքում այդ չէին մտածում թէ
ինչպէս ձեռք գցեն փոքր եւ միջակ գործա-
րանները: Նրանք այժմ կատարեալ տէր են դառ-
նում մեր կերտարագործների առեւտուրին: Տարիների
ընթացքում, սխառեմատիքաւոր, հարուած հա-
րածի ետեւից հասցնելով, նրանք մեր միջակ
եւ փոքր կերտարագործներին այդ դրութեան
մէջ դրին եւ այսօր անում են այն, ինչ որ ի-
րանք են ցանկանում: Այժմ առանց մաս-
նաւորութիւնների մէջ մտնելու կարելի
է ասել, որ ուսացն նաւթարդիւնաբերու-
թեան ապագան պատկանում է վերոյի-
շեալ հինգ ֆիրմաներին: Նրանք կարողացան
ձեռք գցել փոքր եւ միջակ գործարանները եւ
այդ գործարաններում բանեցնելու նաւթի հա-
կաւոր քանակութիւնը իրանք պէտք է ստան-
ուրեն: Այժմ պէտք է ենթադրել, որ այն, ինչ որ ա-
րին կերտարագործների հետ, նոյնը կանեն եւ
փոքր ու միջակ հանքատերերի հետ: Նաւթի
համար գներ իրանք կը նշանակեն եւ իսկակ
այնպիսի գներ, որոնցով հանքատերը միջոց չի
ունենալ գործելու եւ ստիպված կը լինի իր
հանքի իրաւունքն էլ Նորեյին, Բոսնիային, Ման-
թաշեանին յանձնել:

Կրկնում ենք, որ մենք խոր համոզված ենք,
որ մեզ մի այդպիսի ապագայ է ապաստում:
Բայց ինչ կը դառնայ սպառողների դրութիւնը
այն ժամանակ, դժուար չէ գուշակել: Առ այժմ
նրանք արտասահմանեան առեւտուրի վերաբե-
րեալ այդպէս կը վարվեն եւ ապա կամաց-կա-
մաց կը սկսեն ցոյց տալ իրանց սրած առամ-
ները եւ ներքին առեւտուրի վերաբերմամբ:
Ահա այդ մօտօպօղիայի դէմ հարկաւոր է կուռել:
Նոյն ուղղութեամբ է ընթացել ամերիկական
Ստանդարդը եւ այժմ Միացեալ-Նահանգների
օրէնքները ոչինչ չեն կարողանում անել դրա
դէմ: Ամբողջ ամերիկական ժողովուրդը այսօր
բողոքում է դրա դէմ եւ դարձեալ ոչինչ չէ
կարողանում անել: Նոյն լուր կարող է եւ մի-
գանում տեղի ունենալ, մենք կրակներ բողո-
քել, բայց ուշ կը լինի:

Այժմանից է հարկաւոր առաջն առնել եւ
գտնել ներքին առեւտուրը որոշ օրէնքներով ա-
պահովել:

Յ. Մարգարեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՆՔԻՆ

Յունիստի 20-ին

Յունիստի 17-ին Ներսիսի համագործակցութեան
ստացվեց մեր քաղաքի նորընտիր աւագի հա-
տառութեան թուղթը: Ինչպէս առաջ գրել էի
«Մշակում», Նոր-Բայազետի քաղաքային աւագ
ընտրված է պ. Գ. Արծրունի, միանգամայն այդ
ծանր պաշտօնին համապատասխան անձն:

Եւ կազմակերպված, որ հասարակական եւ
կառավարական իշխանութիւնները այգրան եր-
կար ժամանակ անկարող են հանդիսանալ կուռել
այդ անագին շարիքի դէմ:

Եւ ահա այն, ինչ որ չեն կարողացել անել
իշխանութիւնները, «Matin» լրագիրը փորձեց
ինքն անել, եւ փորձը առայժմ շատ ավելի դուրս
եկաւ: Մերկայցնելով հասարակութեան առաջ
կաթնավաճառների կատարած կեղծիքը եւ դրա-
նից ծագած սոսկալի աղէտները ժողովրդի հա-
մար, նա առանց հասարակութեան.

«Կեղծիքի եւ թունաւորման սինդիկատի դէմ»
պէտք է կանգնեցնել մարդկային կենսութեան պաշտ-
պանութեան դաշնակցութիւնը: Չարագործների
համախմբումն դէմ պէտք է ցոյց տալ ամեն
դասակարգի պարկեշտ մարդկանց համախմբումը,
սկսած ամենահարուստից մինչեւ ամենաաղքատը:
Կաթնավաճառները, որոնց մենք մեղադրում ենք
ուրիշ օրից ի վեր (արշաւանքը կաթնավաճառ-
ների դէմ «Matin» լրագիրը սկսեց յունիստի
3-ին), առանց որ դոնէ մի հատ ձայն բարձրա-
նայ ի պաշտպանութիւն նրանց, ունեն իրանց
գրաւարկը, իրանց ոտականութիւնը, իրանց
կազմակերպութիւնը: Մնում է ուրեմն, որ
նրանց չը համակրող հասարակութիւնը նոյնպէս
ունենայ իր կազմակերպութիւնը, իր քիմիա-
ղէտները, իր օտականութիւնը, իր փաստա-
բանները եւ պաշտպանները:

Այդ հիման վրա, յունիստի 11-ի համարում,
«Matin» լրագիրը առաջարկեց հասարակութեան
կազմել «մարդկային կենսութեան պաշտպանութեան
մի դաշնակցութիւն» (Ligue de la Défense de
la vie humaine): Թող ամենքը անգամ գրվեն
այդ դաշնակցութեան, վճարելով մի, երկու,
երեք ֆրանկ անդամակցական վճար, բոլոր
թողութեան. այդ դաշնակցութիւնը միայն մի
նպատակ կունենայ—ստանձնել իր անդամների
կենսութեան պաշտպանութիւնը կեղծող կաթնավաճա-
ռների դէմ: Ամեն մի անգամ, որ կաթ է գնում,

Արծրունին, իրբեւ մարդ, թէպէտ վարչական
գործունէութեան հետ միասին, խաղաղ եւ
անգր բնաւորութեան տէր է, սակայն հասա-
րակական գործունէութեան մէջ, բացի այդ
արժանաւորութիւններից, պէտք է լինել նաեւ
անյողողող, միանգամայն խստապահանջ: Ապա
կարելի կը լինի գուշակ մեր քաղաքի մի որո-
յասակարգի «գեաղապարհականներին», որոնց դե-
վիդը ոչ ոքի հաճելի չէ կարող լինել:

Այժմ, երբ արդէն նորընտիր աւագը, ձայնա-
ւորների նոր կազմակերպութեամբ, մնում է
իր պաշտօնավարութեան մէջ—աւելորդ չի լի-
նի մի քանի խօսք ասել մեր քաղաքի վարիչ-
ների մասին, որոնք գուցէ շատ յոյսեր են
խոստումներ են տուել հասարակութեան:

Քաղաքային վարչութեան անդամները, աւա-
գի հետ միասին, 15 հոգի են, որից 2-ը ընդ-
միշտ քաղաքի են քաղաքից. մնում են 13-ը,
գրանցել մի քանիսը յաճախ ներկայ չեն լինում:
Նիստերին եւ ժողովները չեն կայանում, օրի-
նաւոր թիւը չը լրանալու պատճառով: Այդ
մասին անցեալները դուրսնում հարց յարուց-
վեց, թէ ժողովներին ներկայ չեղողների հետ
պէտք է վարվել կանոնով, այն է առաջին անգամ
յանգիմանութեան յայտնել, երկրորդ—տուգանք
ենթարկել, իսկ երրորդ՝ հրաժարել պաշտօնից:
Այդ որոշումը կայացրեց ներկայ եղող ձայնա-
ւորների ընդհանուր համաձայնութեամբ:

Գ. Սինանեան

ՆԱՄԱԿ ԱՍԽԱՐԱԴԻՑ

Յունիստի 17-ին

Ոչ մի գաւառական քաղաք այնքան հակապա-
կան քայլերով առաջ չէ ընթանում, ինչպէս մեր
Ասխարադը: Այս հետուոր գաղթավայրում, որ
մի ժամանակ անթիւ հրապարակաւորի գաղա-
նային արշաւանքների դաշտավայրն էր կազ-
մում, այս ընդարձակ օտարութեամբ, ուր մի ժամա-
նակ սերելի չաչիւնով ու հրապանների անընդ-
հատ պայթիւններով երկիւղ էին տարածում
իր սահմանակից հաշտ ու անհաշտ բնակչու-
թեան վրա՝ այժմ իւրաքանչիւր անհատ, հաս-
կանալով քաղաքակրթութեան, լուսաւորու-
թեան անասանուն օգուտները, արտի ամբողջ
տենչանքով, ոյժի բոլոր թափովը ձգտում է
դուրս գալ տիրապետող աղանդային խաւա-
մթնոլորտից եւ նետվել հանրօգուտ առաջա-
գիմութեան գիրկը: Նոյն իսկ երկրիս նախկին
տիրապետող հերոս-թագանները, որոնց համար
դեռ տառն եւ հինգ տարի արանից առաջ
մարդկային արիւնը կոպէկի գին չունէր եւ ո-
րոնց համար սպորտային միջոցն էր բացառա-
պէս «ալան» — կողպուտը — այժմ դարձել են

պարտաւոր է նրա նմուշը բերել եւ յանձնել
դաշնակցութեան բիւրօին. այդտեղ անմիջապէս
կը վերլուծեն կաթի եւ ինքն գտնեն, որ նրա
մէջ ամենափոքր խաղաղութիւն կայ, ջուր
կամ այլ վնասակար նիւթ է խառնված, վերջա-
պէս, գուտ կաթ չէ, դաշնակցութիւնը անմի-
ջապէս, իրբեւ ներկայացուցիչ իր անդամի շա-
հերի, դատ կը սկսէ, ոչ թէ միայն քրեական, այլ
եւ քաղաքացիական, բոլոր այն մարդկանց դէմ,
որոնք այս կամ այն կերպով մասնակցել են
կաթի խաղաղութիւն գործին, եւ կաթնավաճառի
ու կաթի բաժանողի դէմ: Դաշնակցութիւնը կը
վարէ դատը բոլոր իննստանդիմանութեան եւ ստա-
նալով կաթնավաճառներից բոլոր վնասները, կը
յանձնէ վնաս կրած անդամներին: Այդպիսով
կաթնավաճառները, այն է կեղծողները, անագին
վնասներ կրելով, կը դադարեն վերջ ի վերջոյ
խաղաղութիւն անելուց, իսկ դաշնակցութիւնը
կը դառնայ փոքրիկ մանուկների պահպան
հրչնալիւր, ամբողջ Պարիզի պաշտպանը թու-
նաւորողների դէմ:

«Ահա ինչ ենք առաջարկում,—եզրափակում է
լրագիրը,—մենք պարտաւոր ենք ամեն բան անել
մենք պարտաւոր ենք այդ գործին նուիրել բոլոր
մեր ոյժերը: Հասարակութեան, այն հասարա-
կութեան, որ է մեր միակ տէրը եւ մեր միակ
դատաւորը, այն հասարակութեան, որից միայն
մենք ապաստւ ենք խրախոյս եւ որի վճիռները
միայն մենք յարգում ենք, այդ հասարակու-
թեան է մնում մեզ պատասխանել, թող նա
խօսէ, թող նա մեզ գրէ, թող նա մեզ ամէ
միայն «այո», եւ վաղը, մարդկային կենսութեան
պաշտպանութեան դաշնակցութիւնը կազմված
կը լինի:

Յաջորդ անգամ մենք կը տեսնենք, թէ ինչ
պատասխան տուեց հասարակութիւնը լրագրի
այդ հրաւերին:

Հ. Ա.

Электронпечатня Груз. Издат. Т—ва. Б.—Ванисская ул.